ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Արմավիրի մարզում 2017թ. կատարված աշխատանքների և 2018թ. ծրագրերի մասին

Արմավիրի մարզի տարածքը **1242** քառ.կմ է, որը կազմում է ՀՀ տարածքի **4.2**%-ը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են **97051.3** հեկտար, կամ մարզի ընդհանուր տարածքի 78.1%-ը: Մարզի մշտական բնակչությունը կազմում է **265.4** հազ. մարդ որը հանրապետության ողջ բնակչության **8.9**%-ն է: Ամենախիտ բնակեցված մարզն է, բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է **214** մարդ, որը բարձր է երկրի միջին ցուցանիշից՝ **2.1** անգամ:

Մարզում համայնքների խոշորացման գործընթաց դեռևս չի սկսվել:

Տնտեսական ցուցանիշներ

Հանրապետության համախառն ներքին արդյունքի ցուցանիշում մարզի մասնաբաժինը կազմում է **5-6%:** Մարզի համախառն ներքին արդյունքի մեկ շնչին բաժին ընկնող մասը *(փորձագիտական հաշվարկներով)* 2015թ. կազմել է **1 մլն 75 հազ.157** դրամ (կամ 1շնչի հաշվով միջին հանրապետական ՀՆԱ-ի 65%-ը), 2016-ին՝ **1 մլն 45 հազ. 431** դրամ (կամ 1շնչի հաշվով միջին հանրապետական ՀՆԱ-ի 62%-ը):

Համախառն արդյունաբերական արտադրանքի ծավալը 2016թ.-ին կազմել է **53.2** մլրդ դրամ, 2017թ. **57.7** մլրդ. դրամ (որը կազմել է հանրապետության ցուցանիշի **3.5**%-ը), մեկ շնչին բաժին է հասնում **217** հազ. դրամ: Աճը 2016թ. համեմատ կազմել է **4.5** մլրդ. դրամ կամ **8.3%:**

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2016թ. կազմել է **167** մլրդ. դրամ, 2017թ.կազմել է **182.3** մլրդ.դրամ (որը կազմել է հանրապետության ցուցանիշի **20.1**%-ը), մեկ

շնչին բաժին է հասնում **686** հազ. դրամ, որը **2.3** անգամ մեծ է հանրապետության միջին ցուցանիշից: Աճը 2016թ. համեմատ կազմել է **15.3** մլրդ. դրամ կամ **9.2**%:

Մարզում շինարարության ծավալը 2016թ. կազմել է **10**մլրդ.դրամ, 2017թ.-ին՝ **25.3** մլրդ. դրամ (որը կազմել է հանրապետության ցուցանիշի **6.1**%-ը), մեկ շնչին բաժին է հասնում **95.3** հազ. դրամ: Աճը 2016թ. համեմատ կազմել է **15.3** մլրդ. դրամ կամ **2.5** անգամ:

Մարզում առևտրաշրջանառությունը 2016թ. կազմել է **40.7** մլրդ. դրամ, իսկ 2017թ-ին՝ **41.5** մլրդ դրամ (որը կազմել է հանրապետության ցուցանիշի **3.1**%-ը), մեկ շնչին բաժին է հասնում **156** հազ. դրամ: Աճը 2016թ. համեմատ կազմել է **0.8**մլրդ. դրամ կամ **1.9**%:

Մարզում ծառայությունների ծավալը 2016թ. կազմել է **17.9**մլրդ. դրամ, իսկ 2017թ.-ին՝ **22.1** մլրդ. դրամ (որը կազմել է հանրապետության ցուցանիշի **1.5**%-ը), մեկ շնչին բաժին է հասնում **83.3** հազ. դրամ: Աճը 2016թ. համեմատ կազմել է **4.2**մլրդ. դրամ կամ **23.3**%:

Արմավիրի մարզում գործում են 1162 առևտրի օբյեկտներ՝ **2975** աշխատողներով, 116 հանրային սննդի օբյեկտներ՝ **580** աշխատողներով, 197 կենցաղային սպասարկման օբյեկտներ՝ **210** աշխատողներով:

Մարզում խոշոր արտադրական և առևտրային կազմակերպությունների թիվը **20** է (որոնք ընդգրկված են 1000 խոշոր հարկատուների ցանկում): Ընդհանուր առմամբ մարզում գործում են 9425 ակտիվ կազմակերպություններ՝ շուրջ 20760 աշխատողներով:

2016թ. մարզում ներդրումների ծավալը կազմել է 10 մլրդ. դրամ: 2017թ.-ին՝ 23.3 մլրդ. դրամ, 2018թ. տարեկան

աշխատանքային պլանով նախատեսվել է 62.6 մլրդ.դրամի կապիտալ ներդրում:

2016թ. տարբեր ներդրումների հաշվին ստեղծվել են 300 հիմնական աշխատատեղեր, 2017թ.-ին 652 հիմնական աշխատատեղեր, իսկ 2018թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվում է 1450 հիմնական աշխատատեղերի ստեղծում:

2016թ. մասնավոր հատվածում կատարվել են 5.9 մլրդ. դրամի, 2017թ. 14 մլրդ դրամի, իսկ 2018թ.-ին նախատեսվել է 35.9 մլրդ.դրամի ներդրումներ՝ ՓՄՁ, ագրոպարենային, զբոսաշրջության, գազաֆիկացման, էներգետիկայի, քաղաքաշինության ոլորտներում:

Մարզ այցելած զբոսաշրջիկների թիվը 2016թ. կազմել է 61839, 2017թ.-ին 117070՝ ներքին և ներգնա զբոսաշրջիկներ (առանց Մայր Աթոռ այցելությունների), իսկ 2018թ. ակնկալվում է 15% աճ՝ 134600 զբոսաշրջիկ:

Գյուղատնտեսության ոլորտ

Մարզում վերջին տարիներին իրականցվում են մեծ ծավալի ջերմոցային, չորանոցային և սառնարանային տնտեսությունների, այգիների և վերամշակող արտադրամասերի հիմնման ծրագրեր:

Հավաքագրվել են ըստ համայնքների և մասնավոր ներդրողների 2018 թվականին ագրոպարենային ոլորտում նոր ստեղծվող և ընդլայնվող կարողությունները՝ ըստ բնագա-վառների, ներդրման գումարի և նոր ստեղծվող աշխատատեղերի թվի, արդյունքում, 20 համայնքների 72 սուբյեկտների կողմից կկատարվեն շուրջ 5 մլրդ դրամի ներդրումներ՝ ստեղծելով 790 աշխատատեղեր:

Մարզում առկա են 61633 հա ոռոգելի հողատարածքներ, որից 51277.9հա գյուղատնտեսական նշանակության են,

որոնցից 2016թ. ոռոգվել է 48699.7հա, 2017թ. – 48787.6 հա, 2018թ. կոռոգվի՝ 48887 հա:

2016թ.-ին արտադրվել է 24.47 հազ. տոննա հացահատիկ, 2017թ.-ին՝ 19.7 հազ. տոննա, կամ ցուցանիշը նվազել է 19.5%-ով:

2016թ.-ին արտադրվել է 54.52 հազ. տոննա կարտոֆիլ, 2017թ.-ին՝ 56.2 հազ. տոննա, կամ ցուցանիշը գերակատարվել է 3.1%-ով:

2016թ.-ին արտադրվել է 145.57 հազ. տոննա բոստան, 2017թ.-ին՝ 149 հազ. տոննա, կամ ցուցանիշը գերակատարվել է 2.4%-ով:

2016թ.-ին արտադրվել է 421.51 հազ. տոննա բանջարեղեն, 2017թ.-ին՝ 447.77 հազ. տոննա, կամ ցուցանիշը գերակատարվել է 6.2%-ով:

2016թ.-ին արտադրվել է 56 հազ. տոննա պտուղ, 2017թ.-ին՝ 80.54 հազ. տոննա, կամ ցուցանիշը գերակատարվել է 43.8%-ով:

2016թ.-ին արտադրվել է 83.68 հազ. տոննա խաղող, 2017թ.-ին՝ 90.3 հազ. տոննա, կամ ցուցանիշը գերակատարվել է 7.9%-ով:

2017թ. արտադրվել է 11675 տոննա միս, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 1,07%-ով:

2017 թվականին արտադրվել է 53100 տոննա կաթ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 1,92%-ով:

2017 թվականին արտադրվել է 42 մլն հատ ձու, որը նախորդ տարվա ցուցանիշը թերակատարել է 15,5%-ով:

2016թ մարզում տեղակայված մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություններից մթերվել է 729 տոննա պտուղ, 5764

տոննա բանջարեղեն և 46162 տոննա խաղող, ընդհանուր ծավալով 52655 տոննա:

2017թ. մարզում տեղակայված մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություններից մթերվել է 3903 տոննա պտուղ, 6473 տոննա բանջարեղեն և 44304 տոննա խաղող, ընդհանուր ծավալով 54680 տոննա, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցել է 3,8%-ով:

Մարզում առկա են 1590 միավոր տրակտորներ: 2017թ. ֆինանսական վարձակալության լիզինգով ձեռք է բերվել 15 միավոր տրակտոր: 2018թ. ձեռք կբերվի ևս 10 միավոր գյուղ տեխնիկա:

Մարզում 2016թ. առկա է եղել 444հա ինտենսիվ այգի, 2017թ. հիմնվել է 22 հա ընկուզենու ինտենսիվ այգի, իսկ 2018թ. նախատեսվում է հիմնել 410 հա ինտենսիվ այգիներ:

2016թ. մարզի գյուղատնտեսության բնագավառում պետական, միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների, մասնավոր ներդրողների կողմից իրականացվել են շուրջ 2.5 մլրդ. դրամի աշխատանքներ, 2017թ.՝ 4.7 մլրդ. դրամի, իսկ 2018թ. նախատեսվում է 5 մլրդ. դրամի ներդրումներ:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով» 217 ֆերմերներ ստացել են 1.1 մլրդ .դրամ վարկ, որից մինչև 5 մլն դրամ վարկ ստացել են 132 ֆերմերներ, 5 մլն դրամ և ավելի՝ 85 ֆերմերներ:

Ֆինանսներ

Մարզի համայնքների 2017 թվականի տեղական բյուջեների եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 7 մլրդ 143 մլն 948.5 հազ դրամ, որը կազմում է տարեկան նախատեսվածի 100.1%-ը, իսկ սեփական եկամուտների

հավաքագրումը կազմել է 2 մլրդ 628 մլն 683 հազ դրամ կամ կատարվել է 100.5%-ով: 2016 թվականի տարեկան ցուցանիշների համեմատությամբ 2017 թվականի սեփական եկամուտներն ավել են հավաքագրվել 582 մլն 308 հազ դրամով: Մարզի համայնքների 2018 թվականի տեղական բյուջեների եկամուտների հանրագումարը կազմել է 7 մլրդ 207 մլն 680,5 հազ. դրամ, իսկ սեփական եկամուտները՝ 2 մլրդ 778 մլն 957 հազ. դրամ: 2018 թվականի մարզի համայնքների սեփական եկամուտների հանրագումարը 2017 թվականի համեմատությամբ ավել է նախատեսվել 150.3 մլն դրամով:

2017 թվականին սոցիալական ծախսերին ուղղված գումարը կազմել է տեղական բյուջեների վարչական մասի հանրագումարի 5.3%-ը, իսկ 2018 թվականին՝ 1.7 %-ը:

2017 թվականին տեղական բյուջեների ֆոնդային մասի փաստացի ծախսերի հանրագումարը կազմել է 489.8 մլն. դրամ, որը 2016 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի նկատմամբ պակաս է 128.2 մլն. դրամով:

2018 թվականի տեղական բյուջեների ֆոնդային մասի տարեկան ծախսը նախատեսված է 424.9 մլն. դրամ, որը 2017 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի նկատմամբ պակաս է 64.9 մլն. դրամով, դեռևս տարեսկզբի ազատ մնացորդի գումարներն ամբողջությամբ չեն նպատակաուղղվել ֆոնդային բյուջեի առանձին ծրագրերին:

2016 թվականին մարզի բնակչության 1 շնչին ընկնող սեփական եկամուտը կազմել է 7675 դրամ, 2017 թվականին՝ 9889 դրամ, իսկ 2018 թվականին կանխատեսվում է 10470 դրամ:

Մարզում գույքագրված աղբավայրերի թիվը՝ 171, գործող հիմնական աղբավայրերի թիվը՝ 46, փակված աղբավայրերի թիվը՝ 125, փակման ենթակա աղբավայրերի թիվը ՝ 5:

2016թ. աղբահանության վճարներից եկամուտը կազմել է 179.5 մլն դրամ, այդ թվում՝ ֆիզիկական անձանցից 148.3 մլն դրամ, իրավաբանական անձանցից՝ 31.2 մլն դրամ, իսկ սան. մաքրման և աղբահանության ծախսը 290.2 մլն դրամ, որից 240.9 մլն. դրամն ուղղվել է աղբահանությանը: Աղբահանության վճարները կազմել են աղբահանությանն ուղղված ծախսի 61.8%-ը:

2017թ. աղբահանության վճարներից եկամուտը կազմել է 193.58 մլն դրամ, այդ թվում՝ ֆիզիկական անձանցից 162.4 մլն դրամ, իրավաբանական անձանցից՝ 31.18 մլն դրամ, իսկ սան. մաքրման և աղբահանության ծախսը 349.8 մլն դրամ, որից 286.8 մլն.դրամը ուղղվել է աղբահանությանը: Աղբահանության վճարները կազմել են աղբահանությանն ուղղված ծախսի 55.3%-ը:

2018թ. աղբահանության վճարներից պլանավորվել է 248.51մլն դրամ եկամուտ, իսկ սան. մաքրման և աղբահանության ծախսը 472.7 մլն դրամ, որից 388 մլն.դրամը ուղղվել է աղբահանությանը: Աղբահանության վճարները կազմել են աղբահանությանն ուղղված ծախսի 52.6%-ը:

Առողջապահության ոլորտ

Մարզի տարածքում գործում են 58 առողջապահական կազմակերպություններ, որոնցից 6-ը մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝ 3-ը բժշկական կենտրոն, 1 հիվանդանոց, 1 մարզային արյան փոխներարկման կայան, 1 առողջության կենտրոն ՓԲԸ և 52 համայնքային ենթակայության առողջության առաջնային պահպանության կենտրոններներ:

2016թ. մարզի գլոբալ բյուջեն կազմել է 2 մլրդ 974 մլն 340 հազ 456 դրամ, որից մարզպետարանի ենթակայության 5 բժշկական կենտրոնների ֆինանսավորումը կազմել է 2 մլրդ 49 մլն 256.1 հազ դրամ, վճարովի ծառայություններից մուտքերը 312 մլն 146.3 հազ. դրամ: Վճարովի ծառայություններից մուտքերը պետական պատվերի նկատմամբ կազմել է 15.2%:

2017թ. մարզի գլոբալ բյուջեն կազմել է 2 մլրդ 882 մլն 154 հազ 200 դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 2 մլրդ 865 մլն 466 հազ 700 դրամ: Մարզպետարանի ենթակայության 5 բժշկական կենտրոնների ֆինանսավորումը կազմել է 1 մլրդ 978 մլն 635 հազ. 600 դրամ, վճարովի ծառայություններից մուտքերը 338 մլն 889.8 հազ. դրամ: Վճարովի ծառայություններից մուտքերը պետական պատվերի նկատմամբ կազմել է 17.1%: Վճարովի ծառայությունները 2016թ. համեմատ ավելացել է 26.7 մլն դրամով կամ աճել է 8.6%-ով:

2018թ. մարզի գլոբալ բյուջեն կազմել է 2 մլրդ 822 մլն 622.7 հազ. դրամ, վճարովի ծառայություններից կանխատեսվող մուտքերը կազմում է 462 մլն. դրամ կամ 2017թ. համեմատ աճը կկազմի 123.1 մլն դրամ:

Սոցիալական ոլորտ

Կարևորվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը, իրազեկության բարձրացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծումը:

2017թ.՝ 2016թ. համեմատությամբ նվազել է նպաստառու ընտանիքների թիվը /միջինը 5809՝ նախկին 5910-ի փոխարեն, նվազումը՝ 101/: 2017թ. նպաստների համար նախատեսված 2 մլրդ 326 մլն 684 հազ. 600 դրամից ծախսվել է 2 մլրդ 172 մլն 485 հազ 300 դրամ, տնտեսվել է 154 մլն 199 հազ 300 դրամ: 2018թ. փետրվարի 1-ի դրությամբ նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 5645:

Սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից 2017թ. մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինների կողմից ետ է գանձել շուրջ 6 մլն 649 հազ 500 դրամ:

Մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինների կողմից շարունակվել է ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը: 2017թ. ընթացքում փոխհատուցվել է 310 անձ՝ ավելի քան 64 մլն 978 հազ 200 դրամի չափով (2016թ. փոխհատուցվել է 256 անձ՝ ավելի քան 63 մլն 480 հազ 900 դրամի չափով):

2017 թվականին 2016թ. համեմատությամբ նվազել են կենսաթոշակառուների թիվը (38.989՝ նախկին 39.749-ի փոխարեն. նվազումը՝ 760), հաշմանդամություն ունեցողների թիվը (10.948՝ նախկին 11.972 փոխարեն, նվազումը՝ 1024), մանկուց հաշմանդամություն ունեցողների թիվը՝ 665, նախկին 654-ի փոխարեն, աճը՝ 11):

2017 թվականին 2016թ. համեմատությամբ նվազել է գործազուրկների թիվը /5885՝ նախկին 6361-ի փոխարեն. նվազումը՝ 476/, իսկ աշխատանք փնտրողների թիվը /7380՝ նախկինում՝ 7574, նվազումը՝ 194/, 2017թ.աշխատանքի է տեղավորվել 656 մարդ (2016թ.-ին՝ 504 մարդ):

Կրթության ոլորտ

2015-2016 ուսումնական տարում մարզում աշակերտների թիվը կազմել է 31610, մանկավարժների թիվը՝ 3592, իսկ աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9.8: 2016-2017 ուսումնական տարում աշակերտների թիվը 32051, մանկավարժների թիվը՝ 3614, աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9.4: 2017-2018 ուսումնական տարում աշակերտների թիվը 32420, մանկավարժների թիվը՝ 3579, աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9.4:

2016թ. առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցների թիվը կազմել է 98, որից մրցանակակիրներ 23 աշակերտ, 2017թ. մասնակցել են 95, որից մրցանակակիրներ՝ 27 աշակերտ, 2018թ. նախատեսում ենք, որ կմասնակցեն 96 աշակերտ, որից 30-ը կարժանանան դիպլոմների և գովասանագրերի:

2016թ. ունեցել ենք 1516 շրջանավարտ, 2017թ. 1352 շրջանավարտ, 2018թ.՝ 702 շրջանավարտ, որոնցից միջազգային կամ ՀՀ պետական բուհերում ուսումը շարունակել են 2016թ. 810 (53.4%), 2017թ. 865 (64%) և 2018թ. կանխատեսվում է, որ բուհերում ուսումը կշարունակեն 580 (82,6%) շրջանավարտ:

2016թ. ընթացքում դպրոցների միջոցների հաշվին իրականացված ընթացիկ և կապիտալ նորոգման ծախսերը կազմել են 60.5 մլն. դրամ, 2017 թ.-ին՝ 60.8 մլն. դրամ, 2018թ.-ին պլանավորվել է 105.5 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ դպրոցների շինարարական և վերանորոգման աշխատանքների համար տարբեր աղբյուրներից ծախսվել են 2016թ.-ին՝ 117.0 մլն. դրամ, իսկ 2017թ.ին՝ 368.2 մլն. դրամ, որից ՀՀ պետական բյուջեից 2017-ին հատկացվել է 224.0 մլն դրամ:

Մարզում գործում են 22 ներմարզային երթուղիներ, որոնք սպասարկվում են 7 ուղևորափոխադրող կազմակերպությունների կողմից:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով չսպասարկվող բնակավայրերի թիվը 2016թ. կազմել է 6, 2017թ.՝ 6, 2018թ. պլանավորվել է 2:

Ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը 2016թ. կազմել է 1.15 մլրդ.դրամ, 2017թ.-ին կազմել է 0.6 մլրդ դրամ, իսկ 2018թ-ին՝ 2.1 մլրդ. դրամ:

Կարողությունների զարգացման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աջակցությամբ 2017թ. կազմակերպվել են բազմաթիվ սեմինար քննարկումներ, որոնք շարունակական են:

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա.Ղահրամանյան